ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 10 փետրվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Գյուլումյանի

Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի

Հ. Նազարյանի

Քննության առնելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի հունվարի 22-ին)՝ խնդրելով.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասը և 265-րդ հոդվածի 2-րդ մասը հակասող և անվավեր ճանաչել Սահմանադրության 10-րդ, 11-րդ հոդվածներին, 59-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

2. Դիմողը գտնում է, որ այլ աշխատանք առաջարկելը՝ որպես աշխատանքային պայմանագիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու նախապայման սահմանված լինելը, խախտում է սահմանադրորեն ամրագրված համաչափության սկզբունքը, քանի որ հիմք չկա պնդելու, թե ինչու՞ այլ աշխատանք առաջարկելու պարտավորության հնարավոր խախտումը, օրենքի այլ դրույթների լույսի ներքո, «կարող է կամ պետք է հիմք հանդիսանա բուն խախտմանը և դրա նյութական հետևանքներին չհամապատասխանող վերականգնում հայցելու և ստանալու համար»:

Դիմողի համոզմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասը չի համապատասխանում նաև իրավական որոշակիության պահանջներին, որովհետև հստակ չէ թե վիճարկվող նորմը ինչպիսի աշխատանք է պարտավորեցնում գործատուին առաջարկել աշխատողին: Իսկ փաստացի իրավակիրառ պրակտիկայում աշխատողի որակավորումից էականորեն ավելի ցածր որակավորում պահանջող և, համապատասխանաբար, էականորեն ավելի ցածր վարձատրություն նախատեսող, իսկ որոշ դեպքերում նաև որոշակի մասնագիտական պատրաստվածություն և հատուկ գիտելիքներ/հմտություններ պահանջող աշխատանք աշխատողին չառաջարկելը դիտվում է որպես օրենքի խախտում:

Ինչ վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասին, ապա ըստ դիմողի՝ այն խնդրահարույց է հետևյալ չորս առումներով:

Նախ՝ խախտման հետևանքով աշխատողի կրած նյութական վնասը կարող է էականորեն նվազ լինել այն միջին աշխատավարձից, որին նա կարող էր հավակնել, եթե խախտումը տեղի չունենար:

Երկրորդ՝ «հարկադիր պարապուրդ» բառակապակցության օգտագործումը կարող է կիրառելի չլինել, քանի որ աշխատողը նախկին աշխատանքից ազատվելու պահից կարող է մեկ այլ գործատուի մոտ աշխատանքի անցած լինել, ինչը չպետք է զրկի նրան նախկին գործատուից համապատասխան հատուցում պահանջելու հնարավորությունից:

Երրորդ՝ խախտմամբ պայմանավորված հարկադիր պարապուրդի ժամանակահատվածը և (կամ) այն ժամանակահատվածը, որի ընթացքում աշխատողը ստացել է ավելի ցածր աշխատավարձ, քան այն աշխատավարձը, որին նա կարող էր հավակնել, եթե խախտումը տեղի չունենար, կարող է տարբերվել և էականորեն ավելի կարճ լինել հարկադիր պարապուրդի առաջացման պահից մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածից:

Եվ չորրորդ՝ իրավակիրառ պրակտիկայում աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց բռնագաձման ենթակա հատուցման կոնկրետ չափը որոշելիս դատարանները չեն կիրառում ողջամիտ չափանիշներ:

3. Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ 2-րդ մասը քննության առարկա է եղել Սահմանադրական դատարանում և 2010 թվականի հուլիսի 7-ին ՍԴՈ-902 որոշմամբ՝ «առաջին նախադասության «կամ այլ» բառակապակցության մասով, և ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի և 32-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր: Այդ որոշման առկայությունը գործը քննության ընդունելու համար արգելք հանդիսանալ չի կարող, քանի որ դրանից հետո վիճարկվող իրավադրույթը փոփոխվել և խմբագրվել է, և դիմողի կողմից բարձրացվում է նոր խմբագրությամբ գործող իրավակարգավորման սահմանադրականության հարցը:

Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ առկա չեն սույն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են Սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ Սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում չի իրականացվում գործի դատաքննություն,

• դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և պահպանել Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածով և 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի անհատական դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի և 265-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

10 փետրվարի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-7